

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23.6/[172118]-13

ՀՀ ՎԱՐՁԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ
ԺԱՄԸ 14:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

Գ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Վ. Նիկոյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Սարգսյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Ն. Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար

Հրավիրվածներ՝

Վ. Այվազյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Մ. Մելքունյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր

Վ. Գաբրիելյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Ա. Բախշյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Վ. Կարապետյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծրագրերի իրականացման մասնագետների խմբի տեխնիկական մասնագետ
Ք. Ղալեջյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբան
Ռ. Թադևոսյան	Նախագծային փուլի թիմի ղեկավար, «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերություն մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու
Ե. Ռումյանցևա	«Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության ծրագրի ղեկավարի օգնական
Լ. Գրիգորյան	Թարգմանիչ

1. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող Երևանի Արշակունյաց պողոտայի կմ 0+000 - կմ 1+280 վերակառուցման (լայնացման) շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով անցկացվող մրցութային փաթեթի հաստատում

(Ն. Մարտիրոսյան, Ն. Երիցյան, Գ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

5. Քննարկումներից հետո որոշվեց՝

1. Հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար Ն. Մարտիրոսյանին՝

1) «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող Երևանի Արշակունյաց պողոտայի վերակառուցման (լայնացման) շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով անցկացվող մրցութային փաթեթից հանել «տեղական ստանդարտ» արտահայտությունը և իրականացվելիք աշխատանքների համար նախատեսել միջազգային նորմերով սահմանված պահանջներ՝ հստակ նշելով դրանց չափանիշները.

2) ծրագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսել միջազգային նորմերով սահմանված պահանջներին (հենասյունների քանակը, հեռավորությունը, թեքությունը, լուսավորության դաշտի ծածկույթը և այլն) համապատասխանող լուսավորության համակարգի ներդրում.

3) ճանապարհների գծանշումների չափանիշները համապատասխանեցնել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրով նախատեսված ամերիկյան AASHTO ստանդարտներով նախատեսված պահանջներին.

4) լրամշակել տեխնիկական առաջադրանքը՝ ըստ որի հիմնական ճանապարհից ելքը դեպի բնակելի տարածք ու թաղամասեր, ինչպես նաև բնակելի տարածքից և թաղամասերից մուտքը դեպի հիմնական ճանապարհ կկարգավորվեն խաչմերուկներով.

5) համապատասխան ոլորտի մասնագետների հետ քննարկել՝

ա. ճանապարհի երկայնքով տեղադրվող մետաղական արգելապատնեշների ներկման աշխատանքների իրականացման նպատակահարմարության, ինչպես նաև բետոնե արգելապատնեշների կիրառման դեպքում միջազգային նորմերով սահմանված պահանջներին համապատասխանող «Նյու-Ջերսի» տեսակի բետոնե արգելապատնեշների տեղադրման հարցերը.

բ. բազալտե եզրաքարերի փոխարեն այլ տիպի (բետոնե) եզրաքարերի տեղադրման նպատակահարմարության հարցը:

6) քաղաքային կայուն զարգացման ծրագրի իրականացման շրջանակներում ծագած խնդիրների կարգավորման նպատակով համագործակցել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների հետ:

2. Հավանություն տալ նիստում հնչեցված դիտողություններին և առաջարկություններին համապատասխան «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվող Երևանի Արշակունյաց պողոտայի կմ 0+000 - կմ 1+280 վերակառուցման (լայնացման) շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով անցկացվող մրցութային փաթեթի լրամշակված տարբերակին:

2. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի Ասիական զարգացման բանկի Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման մասնագետների խմբի նոր կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատում

(Ն. Մարտիրոսյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի Ասիական զարգացման բանկի Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման մասնագետների խմբի նոր կառուցվածքը և հաստիքացուցակը առանց թարգմանչի հաստիքի:

2) լրացուցիչ պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ օգնական թարգմանչի պաշտանային դրույքաչափը սահմանել 350 000 դրամ:

3. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» շրջանակներում մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության պայմանագրի կատարողականի մասին

(Ն. Մարտիրոսյան, Տ. Սարգսյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» ծրագրի շրջանակներում մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության հետ կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարողականի մասին ներկայացված տեղեկատվությունը:

4. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» վարկային համաձայնագրի շրջանակներում «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից իրականացված 2011 և 2012 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արդյունքների մասին

(Ն. Մարտիրոսյան, Տ. Սարգսյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» վարկային համաձայնագրի շրջանակներում «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից իրականացված 2011 և 2012 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ

հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արդյունքների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

5. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Տրանշ 1)» վարկային համաձայնագրի շրջանակներում Երևանի Արշակունյաց պողոտան Արտաշատի խճուղուն միացնող և Արգավանդի խճուղու ճանապարհային հանգույցը Շիրակի փողոցին միացնող քաղաքային մայրուղու եռաչափ մոդելավորմամբ տեսաֆիլմի ներկայացում

(Ն. Մարտիրոսյան, Ն. Երիցյան, Գ. Բեգլարյան, Վ. Նիկոյան, Տ. Սարգսյան)

7. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Սարգսյանին՝

1) ուսումնասիրել և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրերի կառավարման խորհրդի նիստի քննարկմանը ներկայացնել կառուցվող ճանապարհի ամբողջ երկայնքով (բոլոր տրանշերի մասով) գյուղատնտեսական տեխնիկայի և խոշոր եղջերավոր կենդանիներ տեղափոխելու համար անհրաժեշտ վերգետնյա և ստորգետնյա անցումների թիվը, դրանց նախատեսման հետ կապված խնդիրները և տալ համապատասխան ֆինանսական գնահատական.

2) ելնելով արագընթաց ճանապարհի կառուցման ընդունված հիմնական սկզբունքից (ճանապարհի կառուցման գաղափարախոսությունը կայանում է նրանում, որ այդ ճանապարհը չի կարող ունենալ ելք դեպի բնակելի տարածք) ՀՀ պաշտպանության նախարարության նախկին շենքի շրջակայքում կառուցվող բենզալցակայանի սեփականատիրոջ հետ քննարկել բենզալցակայանի մուտքի հարցը և արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ, ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՅԱՆ